ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«06» սեպտեմբերի 2024թ. ՍՉԱՄ-1761

Որոշում

N ԱՉԱՄ-2024/2 առ 05.09.2024թ

«Տենդեր Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգերի ծածկագիր՝ **«ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/17»** , **«ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/19»** , **«ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/21»** ,

Մասնակից՝ **«Տենդեր Պրո» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 08274655, հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 1փկղ.,14շ., 147բն/

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել էին «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/17» , «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգեր, որոնց շրջանակներում կնքվել էին պայմանագրեր, իսկ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրապարակվել էր պայմանագիր կնքելու որոշումների մասին հայտարարությունները, որի շրաջանակներում պետք է կնքվեր պայմանագիրը:

Սակայն 22.03.2024թ-ին ստացել ենք գրություն Հայաստանի Հանրապետության ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ Ե/1934-24 առ 21 Օգոստոսի, 2024թ, համաձայն որի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ «Տենդեր Պրո» ՍՊ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Կարինե Հենրիխի Մարգարովան:

Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ «Ռվ Պրոջեկտ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02853495) 2023թվականի մարտի 7-ից մինչև 2025թվականի մարտի 7-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Կարինե Հենրիխի Մարգարովան և «Ռվ Պրոջեկտ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Կարինե Հենրիխի Մարգարովան համաձայն ՀՀ ԱՆ ՔԿԱԳ ծննդյան ակտի գրանցման հանդիսանում է «Ռվ Պրոջեկտ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Ռաիսա Կամոյի Վարդանովայի մայրը:

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/4
Հեռ. (+374 10) 23-26-00
Էլ. փոստ. info@armstandard.am
https://www.armstandard.am

0051, Ереван, пр.Комитаса, 49/4
Тел. (+374 10) 23-26-00
E-mail. info@armstandard.am
https://www.armstandard.am

0051.Yerevan, Komitas Ave.,49/4
Tel. (+374 10) 23-26-00
E-mail. info@armstandard.am
https://www.armstandard.am

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում:

Հիմնավորում

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն միակողմանի լուծվում է պայմանագիրը, ինչպես նաև հրավերի 8.20-րդ կետի համաձայն պայմանագիր կնքելու իրավունքիվ զրկվում է «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/21» գնման ընթացակարգի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերության և «Տենդեր Պրո» ՍՊ Ընկերության միջև 12.07.2024թ-ին կնքված N «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/17» և 20.08.2024թ-ին կնքված «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/19-3» գնման պայմանագրերը 8.3 կետի պահանջները՝ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ Ընկերությունը 2024 թվականի օգոստոսի 27-ին միակողմանի լուծել է նշված պայմանագրերը:

Ղեկավարվելով հրավերով սահմանված 8.13 կետի համաձայն և Օրենքի 6-րդ հոդվածի, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հաշվի առնելով և հիմք ընդունելով վերոգրյալը **«Տենդեր Պրո» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ**